ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 2.11.2018թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամից 24-ը (քսանչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** —Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռաֆիկի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
5. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն
6. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
7. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
8. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
9. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
10. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավաժության ամբիոնի պրոֆեսոր
11. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
12. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
13. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

14. Հակոբյան Լիզա Հելբերդի — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
15. Սարգսյան Արմենուհի Հակոբի — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
16. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
18. Ղազարյան Ջեմմա Կարոյի— ՇՊՀ ՈՒԽ նախագահի ԺՊ, Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Լրագրություն » 3-րդ կուրսի ուսանողուհի
19. Ավետիսյան Հրանուշ Կարապետի — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
20. Խաչատրյան Աննա Արմենի — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Սոցիալական աշխատանք», 3-րդ կուրսի ուսանողուհի
21. Ավագյան Էլմիրա Սոսի —Մանկավարժության ֆակուլտետ, «Մեթոդիկա» 3-րդ կուրսի ուսանողուհի
22. Հարությունյան Քաջիկ Հակոբի — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)
23. Հարությունյան Ստեփան Մերուժանի — Ռազմական ամբիոն, «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանող
24. Չարչօղլյան Արթուր Էդվարդի — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

2. 2018-2019 ուստարվա նոյեմբեր-մայիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քարտուղար **Կ. Պետրոսյան**

3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում ասպիրանտուրայի, հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգի հաստատման վերաբերյալ

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

4. 2012-2017թթ. ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների համար հետազոտողի ուսումնական- հետազոտական պլանների հաստատում ՀՀ ԿԳ նախարարության որոշումներին և ԲՈԿ-ի պահանջներին համապապատասխան՝ բացառելով առկա թերությունները

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

5. Հետազոտողի կրթական համակարգում ուսումնառաության վարձավճարի սահմանման վերաբերյալ

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

6. ՇՊՀ կանոնադրության փոփոխությունների նախագծի մշակման նպատակով ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման մասին

Հաղ.՝ ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր

7. ՇՊՀ գիտական տեղեկագրում ներկայացված գիտական հոդվածների տպագրության համար վճարի սահմանման մասին

Հաղ.՝ ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր

8. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ

Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանը առաջարկեց ՇՊՀ Գիտական խորհրդի՝ 2017թ. դեկտեմբերի 4-ի նիստում հաստատված «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի 6-րդ կետը փոփոխել՝ վերաձևակերպելով հետևյալ կերպ.

6. ***Խմբում որպես կատարող կարող են ընդգրկվել համալսարանի աշխատակիցները,*** քանի որ նախորդ կարգով ընդգրկված էր միայն պրոֆեսորադասախոսական կազմը և կարծես թե, բուհի մյուս աշխատակիցներին հնարավորություն չի տրվել ընդգրկվելու ներբուհական դրամաշնորհային ծրագրերում:

Պարոն Սերոբյանն առաջարկեց փոփոխել նաև 7-րդ կետը, ըստ որի խմբում ընդգրկվում է նաև ուսանող և եթե նա մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող է, ապա շատ քիչ ժամանակ ունի աշխատելու, քանի որ որոշ ժամանակից ավարտում է, ուստի առաջարկեց 7-րդ կետը վերա ձևակերպել հետևյալ կերպ.

7. Խմբում պետք է ընդգրկվի բարձր առաջադիմություն, ուսումնառելու նվազագույնը մեկ տարի ժամանակահատված ունեցող ՇՊՀ-ի առնվազն 1 ուսանող (բակալավրի 3-4-րդ կուրսի կամ մագիստրոսի կամ ասպիրանտ/հայցորդի կրթական աստիճանի):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ Գիտական խորհրդի՝ 2017թ. դեկտեմբերի 4-ի նիստում հաստատված «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի 6-րդ, 7-րդ կետերը վերաձևակերպել հետևյալ կերպ.

6. Խմբում որպես կատարող կարող են ընդգրկվել Համալսարանի աշխատակիցները:

7. Խմբում պետք է ընդգրկվի բարձր առաջադիմություն, ուսումնառելու նվազագույնը մեկ տարի ժամանակահատված ունեցող ՇՊՀ-ի առնվազն 1 ուսանող (բակալավրի 3-4-րդ կուրսի կամ մագիստրոսի կամ ասպիրանտ/հայցորդի կրթական աստիճանի):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա նոյեմբեր-հունիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատման մասին

Գիտական քարտուղար Կ. Պետրոսյանը հակիրճ ներկայացրեց 2018-2019 ուստարվա նոյեմբեր-հունիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանը: Պարոն Սերոբյանը նշեց, որ այս հարցի շուրջ աշխատել են բոլոր կենտրոնների և դեկանների, ամբիոնի վարիչների հետ՝ նկատի ունենալով բուհի առջև ծառացած խնդիրները՝ առաջիկայում նրա հավատարմագրման գործընթացը, թերությունների վերացման ծրագրերը և այլն: Պարոն Սերոբյանը նշեց, որ աշխատանքային պլանը էլեկտրոնային տարբերակով կուղարկվի գիտական խորհրդի անդամներին ՝դիտարկումներ կատարելու համար, դրանք հաշվի առնելով էլ առաջիկայում այն կներկայացվի հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել գիտական քարտուղարին 2018-2019 ուստարվա նոյեմբեր-հունիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանը էլեկտրոնային տարբերակով ուղարկել գիտական խորհրդի անդամներին ՝ դիտարկումներ կատարելու համար, առաջիկայում այն հաստատելու նպատակով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում ասպիրանտուրայի, հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգի հաստատման վերաբերյալ

Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ կանոնակարգը նախօրոք էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է ամբիոններ, ֆակուլտետներ, գիտական խորհրդի անդամներին, ՌԻԳ-ի նախագահին, ստացվել են դիտարկումները, որոնք էլ հաշվի առնելով՝ կանոնակարգը ներկայացվում է գիտական խորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հ. Դրմեյանը, որին հետաքրքրում էր, թե կոնկրետ ինչպիսի՞ փոփոխություններ է կրել կանոնակարգը:

Ա. Սարգսյանը նշեց, որ փոփոխվել են գնահատման կարգի, ուսումնառության ժամկետների, լուծարքային շրջանի, պրակտիկայի հետ կապված հարցերը:

Ա. Հովհաննիսյանը, որին հետաքրքրում էր, թե ինչ ՞ու են նման փոփոխություններ առաջարկվել կանոնակարգում, նախկին կարգում արդյո՞ք դրանք բացակայում էին:

Ա. Սարգսյանը նշեց, որ նախկին գնահատման կարգը իրականացվել է բակալավրի և մագիստրատուրայի կարգով, ասպիրանտների համար հատուկ գնահատման կարգը բացակայել է, չի կանոնակարգվել պրակտիկայի գործընթացը, հետազոտողների կուտակվելիք կրեդիտների նկատմամբ որևէ պահանջ, օրինակ ստորին շեմի սահմանում չի եղել: Սրա արդյունքում հետազոտողը կարող էր տվյալ տարվա ընթացքում թեկուզ ոչինչ չպլանավորել, սակայն նրան չատեստավորել չեինք կարող:

Այսպիսի փաստացի դեպքի առնչվել են: Այդ իսկ պատճառով էլ անհատական պլանները կազմելիս անհրաժեշտություն է առաջացել կարգում փոփոխություններ մտցնել և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:
Ս. Սարգսյանը մտահոգություն արտահայտեց, որ այս կանոնակարգով չի լուծվում այն հարցը, որի հետ ինքը անընդհատ առնչվում է. չի պլանավորվում ասպիրանտի պաշտպանության ժամանակահատվածը, քանի որ այն կախված է նաև բազմաթիվ գործոններից: Պարոն Սարգսյանը նշեց, որ այս հարցի շուրջ խորհրդակցել է նաև Արմենուհի Սարգսյանի հետ և առաջարկեց հարցը բարձրացնել ԿԳ նախարարություն, հանդես գալով առաջարկությամբ՝ պլանավորել ասպիրանտի պաշտպանությանը հասնելու ժամկետները:
Ա. Սարգսյանը նշեց, որ այս տեսանկյունից ինքը քայլ է համարում նախարարության կողմից այն, որ կրեդիտների մեծ մասը տրվում է նախապաշտպանությունն անցնելուց հետո և քանի որ կրեդիտային համակարգը ասպիրանտուրայի կրթական ծրագիր ներդրվել է 2010թ.-ից, ապա, ըստ նրա, այն դեռևս բարելավման փուլում է:
Ե. Սերոբյանը հավանության արժանացրեց Ս. Սարգսյանի առաջարկը, նշելով, որ այն ժամանակին է, հատկապես, որ հիմա քննարկվում է կրթության մասին օրենքը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում ասպիրանտուրայի, հայցորդության ընդունելության և ուսուցման կանոնակարգը:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

2012-2017թթ. ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների համար հետազոտողի ուսումնական- հետազոտական պլանների հաստատում ՀՀ ԿԳ նախարարության որոշումներին և ԲՈԿ-ի պահանջներին համապապատասխան՝ բացառելով առկա թերությունները

Պարոն Սերոբյանը հարցի առնչությամբ ներկայացրեց, իր բնութագրմամբ, նախապատմություն, ըստ որի ասպիրանտների ուսումնական գործընթացը կազմակերպելիս իրենք հայտնվել էին «սարսափելի» վիճակում, չունեին գիտական խորհրդի կողմից հաստատված պլաններ և եթե նոր կարգ կիրառվեր, նորից հայտնվում էին վատ իրավիճակում, չգիտեին ինչպես շարունակել հետազոտողների ուսումնական գործընթացը, պարտադիր բաղադրիչը չկար, կրթական բաղադրիչը խառնվել էր հետազոտականին: Լուծումը երկար ժականակ չէր գտնվում, այն աստիճան, որ իրեն անուղղակի կերպով մեղադրում էին վճիռ չկայացնելու մեջ, բայց ինքը իսկապես չգիտեր ինչ վճիռ կայացնի: Արդյունքում Ա. Սարգսյանը գործուղվել է ԿԳ նախարարություն, երկու անգամ բավականին երկարատև խորհրդակցություն է ունեցել բարձրագույն և հետբուհական վարչությունում՝ պարոն Սուքիասյանի և այլ աշխատակիցների հետ, ներկայացվել է հիմնահարցը, որտեղ որոշակի լուծում է առաջարկվել: Լուծումը ըստ պարոն Սերոբյանի անցումային որոշում է: Առաջարկվել է տարբերակ, որը խայտաբղետ է և 2, 3 տարի անցումային շրջանում այս

առաջարկված լուծումով կաշխատեն, հետո արդեն բոլոր հետազոտողների համար կարող են միատեսակ մոտեցում դրսևորել:

Այնուհետև պարոն Սերոբյանը խոսքը փոխանցեց **Ա. Սարգսյանին,** ով ներկայացրեց, որ առաջնորդվելով նախարարության կողմից առաջարկած հարցի լուծմամբ, ինքը նույնպես պետք է նախապատմություն ներկայացնի, քանի որ նախարարության կողմից ասվել է, որ համալսարանի գիտական խորհրդում իրավիճակը ֆիքսել և ապա ելնելով ստեղծված իրավիճակից ընդունել այն լուծումը, որն առաջարկում է ուսումնական պլանների հաստատումը: Ա. Սարգսյանը նշեց, որ հետբուհական կրթական համակարգում իրենք կրեդիտային համակարգին անցնելու մի փաստաթուղթ են ունեցել, դա նախարարի հրամանն է եղել՝ 2010թ.-հունիսի 21-ին և այդ հրամանին կից ներկայացվել է ուղեցույց, որտեղ տրվել է առարկայացանկը, ըստ որի պետք է կազմակերպվեր հետազոտողների ուսումնական գործընթացը: Այս փաստաթղթի սկզբնամասում ներկայացվում է, թե ինչպես պետք է կրեդիտների բաշխումն իրականացնել, առարկայացանկը ներկայացված է, սակայն կրեդիտների բաշխումն իրականացնելու համար այս հրամանում ներկայացված են որոշակի պահանջներ և այդ պահանջներին համապատասխան հարկավոր էր պարզապես կրեդիտների բաշխում իրականացնել: Դա վերաբերում է ուսումնական կրթամասին, որը 20-30%-ը պետք է կազմի և դրանց համապատասխան 1/3 մասը պետք է տրվի մասնագիտական կրթամասին: Ա. Սարգսյանը շարունակեց, որ այս փաստաթղթի հիման վրա իրենց մոտ հաստատվել է համապատասխան փաստաթուղթ՝ «ԳՊՄԻ-ի ասպիրանտ/հայցորդների ընդունելության և ուսուցման» կանոնակարգը՝ 2013թ.-ին որակի հանձնախմբի կողմից մշակված, որտեղ ներկայացվում է կրթական համակարգում հետազոտողի ուսումնական պլանը, որն էլ ամբողջովին համապատասխանում է նախարարի 2010թ.-ի հրամանի պահանջներին: Այստեղ ներկայացված ուսումնական պլանում, որը հաստատված է եղել գիտական խորհրդի կողմից, կրեդիտների բաշխումը կատարվել է տվյալ պահանջներին համապատասխան, ուսանողներն ունեցել են իրենց անհատական պլանները, ուսումնական գործընթաց է իրականացվել, որը ենթադրում է, որ դասատախտակ է կազմվել, տեղեկագրեր են լրացվել, մատյաններ են լրացվել և այլն:

Հետագայում 2016թ.-ի հունվար-փետրվար ամիսներին, անհասկանալի խնդիրներով պայմանավորված, ստեղծվել են փաստաթղթեր հետին ամսաթվով, ուսումնական պլաններ, որոնք գիտական խորհրդով հաստատված չեն եղել: Բացի այս ամենից ուսումնական պլանները, կարծես, կարելի է ասել, բեռնաթափված են եղել, մի քանի առարկաներ դուրս են բերվել ուսումնական պլաններից, կրեդիտների բաշխումը նույնպես խախտված է եղել: Այս փաստաթղթերի ստեղծման արդյունքում ի՞նչ է կատարվել: Եղել են հայցորդներ, ովքեր արդեն իրենց ուսումնառությունը ավարտել էին, եղել են, որ մի մասն իրականացրել են, մի մասը դեռևս պիտի շարունակեին, և հայցորդներ, ովքեր ընդունվել են 2016թ.-ին, և նոր պիտի սկսեին իրենց ուսումնառությունը և պարտավոր էին գիտական խորհրդի որոշման համապատասխան կազմակերպել ուսումնառությունը, սակայն կազմակերպվել է վերջին՝2016թ-ի ուսումնական պլաններին համապատասխան: Ներկայացված, այսպես կոչված, բեռնաթափված առարկայացանկից մի քանի առարկաներ դուրս են բերվել ուսումնական պլաններից, օրինակ, եթե ըստ նախարարության կողմից ներկայացված ուղեցույցի 7 առարկա պետք է ուսումնառվեր, ապա թողնված է եղել ընդամենը 3-ը, կատարվել է նաև կրեդիտների վերաբաշխում և ստացվում է, որ

ուսանողների մի մասը, չգիտես ինչ պատճառով, այս առարկաների որոշ մասը չպետք է ուսումնասիրի:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝
Ս. Սարգսյանը, որին հետաքրքրում էր, թ՞ե նախկին ուսումնական պլանները ու՞մ կողմից են ստորագրվել: Ա. Սարգսյանը նշեց, որ ստորագրել են նախկին ռեկտոր Վ. Գրիգորյանը և նախկին պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը:
Ե. Սերոբյանը նշեց, որ ստորագրված ուսումնական պլանները փաստորեն նախարարության պահանջներին համապատասխան ստանդարտ ձևից շեղված են և գիտական խորհրդով հաստատված չեն եղել:
Կ. Սահակյանին հետաքրքրում էր, թե ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի հայցորդը պաշտպանության գնալիս:
Ա. Սարգսյանը պատասխանեց տիկին Սահակյանի հարցին, միաժամանակ նշելով, որ հայցորդը մինչև պաշտպանությունը կարող է դիմել բուհ և պահանջել ակադեմիական տեղեկանք, որտեղ էլ պետք է ընդգրկված լինեն այն առարկաները կրեդիտներով ֆիքսված, որոնք իրենք ուսումնառել են:
Ա. Սարգսյանը շարունակեց, որ ինքը այս հարցը ներկայացրել է պարոն Սերոբյանին, և երկար ժամանակ հարցին լուծում չկարողանալով տալ, ռեկտորի ԺՊ-ի կողմից որոշվել է Ա. Սարգսյանին գործուղել նախարարություն, քանի որ հարցի ճիշտ լուծումով է պայմանավորված հետազոտողների ուսումնական գործընթացների հետագա ընթացքը և ցանկալի չէ, որ որևէ ուսանող տուժի բուհում կատարված որևէ թերությունից: Ա Սարգսյանը նշեց, որ նախարարության համապատասխան մասնագետներին փաստաթղթերը ներկայացնելուց և խորհրդակցելուց հետո, նրանց կողմից առաջարկվել է, կարելի է ասել, օպտիմալ տարբերակ՝ անցումային լուծումով: Նախարարության կողմից հանձնարարվել է հարցը անպայման մտցնել գիտական խորհուրդ, հարկավոր է ֆիքսել իրավիճակը, որ այս հանգամանքը տեղի է ունեցել ի գիտություն գիտական խորհրդին և ելնելով իրավիճակից հարցին լուծում տալ հետևյալ կերպ. հաստատել ուսումնական պլանները, հենվելով բացառապես իրականության վրա, և եթե որոշ ուսանողներ ստացվում է, որ հումանիտար կրթամասի բոլոր առարկաներն արդեն անցել էին և իրենց համար ստեղծվել է նոր ուսումնական պլան, փաստվում է, թե իբրև միայն 3 առարկա է ուսանողը ուսումնասիրել, բայց հիմքերը կան, և մատյաններ կան լրացված, և ակադեմիական տեղեկագրերը կան, որ այդ անձը տվյալ առարկան անցել է, և նախարարությունում ասվել է, որ ուսումնական պլանները կազմելիս պետք է հենվել իրականության վրա, որ այդ անձը անցել է այդ դասընթացները, վերցնել այդ առարկաները, և եթե համալրման կարիք կա, ապա ի նկատի ունենալ ուսանողների շահերը: եթե ինչ որ շեղում է լինում, նորից հաշվի առնելով ուսանողների շահերը, շեղումը զուտ պայմանավորված պետք է լինի նրանով, որ 2017թ.-ին ունենք նախարարության նոր որոշում և համապատասխանեցնել այդ որոշմանը, եթե նույնիսկ գիտական խորհրդում որոշակի անհամապատասխանություն կլինի նախարարության որոշման նկատմամբ, ապա պահպանվեն սահմանված ներքին ու վերին շեմերը: Բացի այդ, այստեղ թերևս դիտարկվել են ընթացիկ ուսանողները և նրանց պարագայում, եթե եղել է առարկա, որ հաշվարկվել է մասնագիտական առարկայի կրեդիտը և այն 1/3-ից ավել է լինում, նախարարության կողմից այսպիսի լուծում առաջարկվեց, որ կարող է այդ առարկան գրվել ակադեմիական տեղեկագրի մեջ, որ անձը ուսումնասիրել է այդ առարկան, բայց կրեդիտ չշնորհել, ուղղակի

փաստ է, որ այն անցել է, ժամանակ է ծախսել և համենայնդեպս այդ դիսցիպլինի շրջանակներում ուսանողը որոշակի հմտություններ է ձեռք բերել: Այնուհետև Ա Սարգսյանը շարունակեց, որ իրենց կենտրոնի կողմից ամեն ասպիրանտ- հայցորդի համար համապատասխան աղյուսակներ են կազմվել, որտեղ երևում է հին պլան, նոր պլան, գունավորված, թե ինչ պլանով ինչն է իրականացվել, նոր պլանին համապատասխան ինչն է իրականացված, համադրել են, համապատասխանեցրել են և այժմյան առաջարկվող լուծումը ի նկատի ունենալով կազմվել են ուսումնական պլաններ յուրաքանչյուր հայցորդին համապատասխանեցված: Ա. Սարգսյանը հավելեց, որ արդյունքում ունեն առաջարկված նոր ուսումնական պլաններ, որի ձևաչափը ներկայացվեց գիտական խորհրդի անդամներին, որտեղ յուրաքանչյուր փոփոխությունը երևում էր, եթե կրեդիտները չեն հանայրվել, ապա ընտրովի առարկաներ են առաջարկվել, որով ուսանողը առարկայացանկից իր ընտրությունը կատարում է: Այս բոլոր որոշումները կատարված են նախարարության որոշումների հիման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ս. Սարգսյան , որն ասաց, որ եթե մանրամասն նայված է, ուրեմն հաստատենք:

Ե. Սերոբյանը, որը նշեց, որ իրենք, կարելի է ասել, դատապարտված են հաստատելու այս պլանները, որպեսզի հետազոտողները չտուժեն:

Լ. Հակոբյանին հետաքրքրում էր, 2016թ.-ին ուսումնական պլաններում կատարված փոփոխությունը ի՞նչ հիմքերի վրա են կատարվել, արդյո՞ք եղել է հիմք դրանք փոխելու:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ երկար ժամանակ իրենք հիմքերն են որոնել, սակայն դրանք կարծես բացակայում են, բացի դրանից 2016թ.-ին այդ բաժնի աշխատակիցներ Լիլիթ Պապիկյանը, Լիլիթ Մարգարյանը, հիմա աշխատում են գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնում, որոնց նույնպես դիմել են հիմքերի հարցով, նրանք նույնպես չեն կարողացել ներկայացնել դրանք:

Վ. Խաչատրյանը կարծում է, որ այս խնդիրը քննարկելիս, եթե ի գիտություն ենք ընդունում և գնահատական չի տրվում հարցին, ապա չկա երաշխիք, որ այն նորից չի կրկնվի բուհում:

Ե. Սերոբյանը հաստատեց Վ. Խաչատրյանի կարծիքը և ասաց, որ եթե այս ամենը կատարվել է հանգամանքների բերումով և վերահսկողությունը բացակայել է, ապա այ՛ն, կարող է նորից կրկնվել:

Ռ. Մարդոյանի կարծիքով,- սա ուղղելի խնդիր է, աշխատելիս բազմաթիվ բացթողումներ կարող են լինել:

Ս. Սարգսյանի կարծիքով, եթե գնահատական պետք է տրվի հարցին, ապա գիտական խորհրդի նիստի ժամանակ իրենք լսեցին միայն մի կողմի ներկայացրածը հարցի վերաբերյալ և ճիշտ կլինի լսել նաև և՛ պարոն Գրիգորյանին, և՛ տիկին Ֆարմանյանին, ուստի գտնում է, որ ընդունեն հաղորդումը ի գիտություն, ապա հաստատեն հետազոտողների անհատական պլանները:

Ե. Սերոբյանի կարծիքով իրենք, կամ պետք է կազմեն համապատասխան հանձնաժողով, հրավիրեն նախկին պաշտոնյաներին, որոնք առնչվում են վերոհիշյալ ուսումնական պլանները ստորգրելու հետ, լսեն նրանց, կամ, քանի որ լուծումը արդեն առաջարկված է նախարարության կողմից, ընդունել ի գիտություն և

հաստատել նոր կազմած պլանները: Պարոն Սերոբյանի կարծիքով նման տիպի բարդություններից խուսափելու համար ինքը առաջարկում է, որ այսուհետ հետազոտողների ուսումնական պլանները ստորագրվեն ինչպես գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի, այնպես էլ ուսումնական գործընթացի կառավարման կենտրոնի տնօրենի, ինչու չէ, նաև կենտրոնի գործընթացն իրականացնող աշխատակցի կողմից:

Լ. Ղուկասյանի կարծիքով առաջարկվածը գտնում է ճիշտ, քանի որ ամբիոններում դրույքաչափը սահմանելիս ներառվում է նաև դասախոսների ծանրաբեռնվածությունը հետազոտողներին դասավանդելիս :

Ըստ պարոն Սերոբյանի, քանի որ երկրորդ կողմին իսկապես չենք լսել, ապա առաջարկեց ավելի մեղմ բնութագիր տրվի կատարվածին, այսինքն ընդունենք հաղորդումը ի գիտություն, հաստատենք պլանները, սակայն ամրագրենք, թե ինչու ենք հիմա 2013թ.-ի պլանները հաստատում և այս ամենը կատարվում է ի շահ հետազոտողների

Հ. Դրմեյանի կարծիքով ճիշտ կլինի գիտխորհրդի նիստի արձանագրության մեջ Ա. Սարգսյանի ներկայացրածը ամրագրելը, բայց ստացվում է, կարծես, միակողմանի հարցի պարզաբանում, քանի որ ստորագրողները կարող են բացատրել, թե ինչու են փոփոխնել հետազոտողների ուսումնական պլանները: Պարոն Դրմեյանին հետաքրքրում էր նաև, թե նախարարության կողմից 2010-2016թթ. միջակայքում արդյոք նոր կանոնակարգ չի մշակվել հետազոտողների կրթական գործընթացի հետ կապված:

Ե. Սերոբյանը պատասխանեց, որ իրենք տեղյակ են և չի մշակվել:

Ա. Հովհաննիսյանի կարծիքով հարցի բարոյական կողմը ևս կա և այս խնդիրը չի կարելի լուծել միայն հաղորդումը ի գիտություն ընդունելով, այլ իր կարծիքով, արձանագրելիս պետք է շեշտել ուսումնական պլաններում «թույլ տված թերացումներ» բառակապակցությունը:

Վ. Խաչատրյանի կարծիքով սա թերացում չէ, սա ուրիշ բան է:

Վ. Խաչատրյանը ասաց, որ իր առաջարկը հանում է:

Ա. Սարգսյանը առաջարկեց, որ քանի որ նախարարությունում ասվել է, որ իրավիճակը ամրագրել, ընդունել ի գիտություն, հաստատել պլանները, ուրեմն գիտական խորհուրդը այդպես էլ պետք է աշխատի, այնուհետև շարունակեց, որ նախարարությունում առաջարկվել է հարցին լուծում տալ հետևյալ կերպ. հարցը լսել գիտական խորհրդում, ֆիքսել ստեղծված իրավիճակը, ապա հաստատել ուսումնական պլանները: Դուրս գալով իրավիճակից, հաշվի առնել այն հանգամանքը, որ որոշ հայցորդներ, ասենք, արդեն անցել են հումանիտար կրթամասի որոշ առարկաներ, և եթե նրանց համար կազմվում է նոր ուսումնական պլան, կարելի է որոշ առարկաներ համալրել՝ ուսանողների շահերից և իրողությունից դուրս գալով, եթե կան շեղումներ (քանի որ 2017թ.-ին ունենք նոր որոշում), ապա դրանք գոնե համապատասխանեն նախարարության կողմից սահմանած ներքին ու վերին շեմերի պահպանմանը: Ա. Սարգսյանը հավելեց նաև, որ եթե հայցորդների մասնագիտական առարկաների կրեդիտների ընդհանուր քանակը 1/3-ը գերազանցում է, ապա նախարարության կողմից ևս առաջարկվել է, որ կարելի է տեղեկագրում նշել, որ տվյալ անձը այդ առարկան արդեն ուսումնասիրել է, սակայն կրեդիտ չշնորհել: Այս բոլոր պահանջներին համապատասխան կազմվել են յուրաքանչյուր հայցորդի համար առանձին ուսումնական պլաններ, (Ա. Սարգսյանը

գիտական խորհրդի անդամներին առանձին աղյուսակներով էկրանին ներկայացրեց հին և նոր կազմած ուսումնական պլանները՝ համադրելի առարկաները գունավորված): Ա. Սարգսյանը նշեց, որ արդյունքում ունեն նոր ձևաչափով ներկայացված ուսումնական պլաններ, որտեղ յուրաքանչյուր փոփոխություն երևում է:

Նկատի ունենալով Ա. Սարգսյանի հաղորդումը և գիտական խորհրդի անդամների կարծիքներն ու քննարկումները վերոհիշյալ հարցի շուրջ, պարոն Սերոբյանը առաջարկեց քվեարկության դնել երկու դրույթ.

1. Ի գիտություն ընդունել 2012-2017թթ.-ին ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների համար կիրառված հետազոտողի ուսումնական-հետազոտական պլանների վերաբերյալ հաղորդված տեղեկատվությունը: Դուրս գալով ստեղծված իրավիճակից ՝ հաստատել 2012-2017թթ. ընդունված և այժմ դեռևս ուսումնառությունը շարունակող հետազոտողների ուսումնական պլանները:

2. Ամրագրել, որ 2012-2017թթ.-ին ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների համար կիրառված հետազոտողի ուսումնական-հետազոտական պլաններում կատարվել են թերացումներ(ընդ որում 2010-13թթ., 2013-16թթ-ի հունվարը աշխատել են ըստ գիտական խորհրդի որոշման, ապա 2016թ.-ից կատարվել են վերոգրյալ փոփոխությունները):

Դուրս գալով ստեղծված իրավիճակից ՝ հաստատել 2012-2017թթ. ընդունված և այժմ դեռևս ուսումնառությունը շարունակող հետազոտողների ուսումնական պլանները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ 1-ին դրույթը՝

24 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ի գիտություն ընդունել 2012-2017թթ.-ին ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների համար կիրառված հետազոտողի ուսումնական-հետազոտական պլանների վերաբերյալ հաղորդված տեղեկատվությունը: Դուրս գալով ստեղծված իրավիճակից ՝ հաստատել 2012-2017թթ. ընդունված և այժմ դեռևս ուսումնառությունը շարունակող հետազոտողների ուսումնական պլանները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1:

5. ԼՍԵՑԻՆ՝

Հետազոտողի կրթական համակարգում ուսումնառաության վարձավճարի սահմանման վերաբերյալ

Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ այս հարցը իր կողմից բարձրացվել է նախորդ գիտական խորհրդի նիստի ժամանակ, որտեղ որոշվել է հարցը հետաձգել,

անդրադառնալ դրան, երբ բուհի գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից կներկայացվի հետազոտողի ուսումնառության վարձավճարի սահմանումը՝ վարձավճարի գոյացման մեթոդաբանությանը համաձայն, ինչպես նաև օրինական ուժով սահմանված հիմքերով: Ա. Սարգսյանը նշեց, որ իրենք հետաքրքրվել են նաև նախարարությունից որ այս հարցին առնչվող պետության կողմից սահմանված առանձին փաստաթուղթ չկա, կան ընդամենը պիլոտային ներդրված ծրագրեր, միաժամանակ տիկին Ավետիսյանի կողմից փոխանցված մեթոդաբանությունն էլ ուսումնասիրվել է իրենց կողմից և դրանց հիման վրա հետազոտողի կրթական համակարգում ուսումնառության վարձավճարի սահմանման վերաբերյալ առաջարկվում է հետևյալ տարբերակը.

		Քանակ/ տարիներ	Ժամեր	Ընդամենը ժամեր	Գումար
1.	Մասնագիտական առարկաներ	6առարկա	20	120	360.000
2.	Ոչմասնագիտական առարկաներ	3 առարկա	16	48	120 .000/2= 60.000
3.	Ոչմասնագիտական ընտրովի առարկաներ	2 առարկա	16	32	80.000
4.	Գիտական ղեկավար	5տարի	50	250	750.000
5.	Պրակտիկայի համար փոխանցում այլ կազմակերպ.				40.000
	Ընդամենը				1.290.000

Առաջարկվում է հայցորդների դեպքում վարձավճարը 5 տարիների համար սահմանել տարեկան 300.000 դրամ, իսկ վճարովի համակարգի ասպիրանտների դեպքում 4 տարիների համար՝ տարեկան 375.000 դրամ: Ուսումնառության համար վճարվող ընդհանուր գումարը կլինի 1.500.000 դրամ:

Այժմ որոշենք նաև 1 կրեդիտի համար սահմանվող գումարը.

1.500.000/180 = 8350 դրամ

Առաջարկվում է 1 կրեդիտի համար սահմանել 8350 դրամ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա. Մկրտչյանը, ըստ որի հետազոտողի համար վճարն ավելին պետքէ լինի և առաջարկեց տարեկան 400.000 ՀՀ դրամ:

Ռ. Մարդոյանի կարծիքով սոցիալապես անապահով մարզում նման գումարը մատչելի չի լինի հետազոտողի համար:

Ե. Սերոբյանը նշեց, որ ինքը մի կողմից համաձայն է պարոն Մկրտչյանի հետ, մյուս կողմից ավելի ռեալ պետք է գնահատել իրականությունը և եթե վարձավճարի հարց են քննարկում պետք է ասի, որ ինքը չի կիսում նախկինում ընդունված այն կարգը, որ բուհի աշխատող- հետազոտողների համար սահմանվել է 100 000 դրամ, իսկ մյուս ասպիրանտների համար զեղչեր չեն գործել, որն էլ առաջացրել է վերջիններիս վրդովմունքը և իրեն խնդիրը ներկայացնելը, հատկապես, որ բուհի աշխատակիցները բուհից աշխատավարձ են ստանում, այս կարգը այժմ չի գործում:

Ա. Հայրապետյանը նշեց, որ տարբեր տարիների համար տարբեր պայմանագրեր կարող են գործել և դրանք ուժը կորցրած են համարվում պայմանագրի ամրագրված ժամկետներում:
Ռ. Մարդոյանի կարծիքով ասպիրանտուրայում զեղչեր ընդհանրապես չպետք է լինեն, քանի որ այն պարտադիր կրթություն չէ:
Ս. Սարգսյանի կարծիքով մեր երկրում անգործությունը 40 % է և չի կարելի համեմատվել այլ երկրների հետ, այս պարագայում հասարակության մեծ մասը կրթություն չի ստանա:
Պարոն Սերոբյանը քննարկումների արդյունքում առաջարկեց Ա. Մկրտչյանի առաջարկն ու Ա. Սարգսյանի հաղորդումը հետազոտողի կրթական համակարգում ուսումնառության վարձավճարի սահմանման մասին քվեարկել.

1. հայցորդների դեպքում վարձավճարը 5 տարիների համար սահմանել տարեկան 300.000 դրամ, իսկ վճարովի համակարգի ասպիրանտների դեպքում 4 տարիների համար՝ տարեկան 375.000 դրամ: Ուսումնառության համար վճարվող ընդհանուր գումարը կլինի 1.500.000 դրամ:
2. հայցորդների դեպքում վարձավճարը 5 տարիների համար սահմանել տարեկան 400.000 դրամ, Ուսումնառության համար վճարվող ընդհանուր գումարը կլինի 2.000.000 դրամ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ 1-ին դրույթը՝

24 անդամ. կողմ՝ 16, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հետազոտողի կրթական համակարգում ուսումնառության վարձավճարը սահմանել.
հայցորդների դեպքում՝ 5 տարիների համար տարեկան 300.000 դրամ,
վճարովի համակարգի ասպիրանտների դեպքում՝ 4 տարիների համար՝ տարեկան 375.000 դրամ: Ուսումնառության համար վճարվող ընդհանուր գումարը կլինի 1.500.000 դրամ, իսկ 1 կրեդիտի համար սահմանվող գումարը՝ 8350 դրամ:

6. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ կանոնադրության փոփոխությունների նախագծերի մշակման նպատակով ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ Ս. Սարգսյանի կողմից ՇՊՀ կանոնադրության և կառուցվածքային փոփոխությունների հետ կապված դիտարկումներ է ստացել, որին ինքը պարոն Ս. Սարգսյանի հարցի հաղորդումից հետո կանդրադառնա:

Պարոն Սարգսյանը ներկայացրեց, որ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա պարոն Սերոբյանը դիմել է գիտական խորհրդի անդամներին ստեղծել աշխատանքային խումբ ՇՊՀ կանոնադրության մեջ եղած անճշտություններն ու

ներքին հակասությունները վերանայելու, մշակելու և ներկայացնելու գիտական խորհրդին: Սակայն պարոն Ս. Սարգսյանը գտնում է, որ մինչև կանոնադրության շտկումները, պետք է կառուցվածքային փոփոխություններ կատարել, հատկապես որոշ ամբիոնների հետ կապված, որոնք պետք է համապատասխանեն համալսարանի անվանմանը /մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոն կամ աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն/ նման ամբիոնների անվանումներ ոչ մի տեղ չկան,- շեշտում է Ա. Սարգսյանը և շարունակում, որ եթե ֆինանսական ծանր վիճակ է, կարելի է ՄԿԾ-ները փոխել, աշխատավարձերը իջեցնել, կամ այլ լուծումներ տալ, նախկինում մաթեմատիկայի երկու ամբիոնները միավորվել էին և դարձել մեկ ամբիոն, սա հասկանալի էր, քանի որ դրանք մաթեմատիկական դիսցիպլինով էին:

Ս. Սարգսյանը նշեց նաև, որ եթե ուսանողները քիչ են, ուրեմն պետք է ծրագիրը փակել, այն ինչ արվել է ամբիոնների միավորման հետ կապված, ինքը հարցի լուծում չի համարում: Ս. Սարգսյանը գտնում է, որ պետք է գիտխորհրդով մշակեն այս նախագիծը, ընտրված ռեկտորի առաջ դնեն այն, նոր ռեկտորը պետք է արտահայտի կոլեկտիվի կարծիքը, նա կարող է առաջարկել իր մասնավոր դիտարկումները: Առաջարկեց նաև գիտխորհրդին կից հանձնաժողով ստեղծել /հինգ հոգուց բաղկացած, առաջարկեց իրեն առաջադրել այդ հանձնաժողովում/:

Ք. Հարությունյանին հետաքրքրում էր այն հարցը, թե արդյո՞ք պարզաբանվել է գիտխորհուրդը լեգիտիմ է, թե ոչ, հոգաբարձուների խորհրդում դա քննարկվել է, - մենք հիմա լեգիտիմ ենք, թ՞ե ոչ:

Ե.Սերոբյանն նշեց, որ հոգաբարձուների խորհրդի նիստում այս հարցը բարձրացվել է ըստ մեր բուհի աշխատակցի հոգաբարձուների խորհրդին ուղղված նամակի: Ոչ լեգիտիմ ասել չի կարելի, ինքը սկզբունքորեն դեմ է այդ գրածին, կարող է կանոնադրության մեջ որոշակի երկդիմություններ կան, սակայն դա չի նշանակում, որ գիտական խորհուրդը ոչ լեգիտիմ է:

«Մենք ունենք իմպերատիվ փաստաթուղթ, որտեղ մի դրույթով աշխատելիս, մյուս դրույթով երկդիմություններ է առաջանում: Ես հոգաբարձուների խորհրդում էլ եմ ասել, որ լեգիտիմության մասին խոսելը անիմաստ է, մենք խախտումներով գիտխորհուրդ չենք ձևավորել, այլ աշխատել ենք կանոնադրությամբ: Մենք ուղղակի պետք է կանոնադրության մեջ մեր առաջարկվող փոփոխությունները ներկայացնենք նոր ռեկտորին, ապա հոգաբարձուների նիստով հաստատման: Սա ուղղակի կոլեկտիվի կարծիքը կլինի,- նշեց պարոն Սերոբյանը: Այնուհետև պարոն Սերոբյանը առաջարկեց խնդրի լուծման համար ստեղծել մեկ հանձնաժողով՝ երկու ենթահանձնաժողով, առաջինը կանոնադրության փոփոխությունները շտկելու, երկրորդը՝ կառուցվածքային փոփոխությունները լրացնելու համար, քանի որ երկուսը իրար լրացնող են:

Ա. Հայրապետյան ի կարծիքով ավելի լավ է կանոնադրության փոփոխուրյուններից սկսել, ապա կառուցվածքային փոփոխություններին անդրադառնալ:
Կ. Պետրոսյանը առաջարկեց կանոնադրության փոփոխություններն իրականացնել, որոնք առաջնային են այս պահին, հետո քանի որ նոր ռեկտոր կընտրվի, կառուցվածքային փոփոխություններ եթե անհրաժեշտ լինեն, դրանց անդրադառնալ այդ ժամանակ: լինեն:
Ա. Հայրապետյանը նշեց, որ եթե այսօր նախարարը մամուլով, հեռուստատեսությամբ հայտարարում է, որ բուհերը պետք է միավորվեն, ինչու ենք կառուցվածքային փոփոխություններ անում:

Սերոբյանի կարծիքով բուհի հավաստագրման համար երկու տարում երեք անգամ կառուցվածքային փոփոխությունների ենթարկվելը շահավետ չէ:

Թ. Մելիքյանի կարծիքով հիմա երկրում վարչապետ է ընտրվում, իրավիճակ է փոխվել, նա առաջարկեց հարցը հանել, հետագա գիտխորհուրդի նիստերում քննարկել:
Էվելինա Մաթևոսյան ասաց, որ հոգաբարձուների խորհրդի նիստի ժամանակ առաջարկում էին այդ օրը կանոնակարգում փոփոխություններ կատարել, մենք դեմ եղանք: Դրա համար գիտական խորհրդին առաջարկվեց կանոնադրության վրա աշխատել, շտկումներ կատարել, ընդ որում անպայման իրավաբան աշխատի: Հիմա անհրաժեշտ է կանոնակարգի շտկումների վրա աշխատել:
Ե. Սերոբյանը չհամաձայնեց տիկին Մաթևոսյանի հետ, նշելով, որ հոգաբարձուների խորհուրդը այդ օրը չէր կարող նման առաջարկ անել, քանի որ կանոնադրության դրույթի փոփոխությունները քննարկումների արդյունքում պետք է իրականացվեն:
Ս. Սարգսյանը նշեց, որ ինքը նորից պնդում է, որ կառուցվածքային փոփոխություններից պետք է սկսել:
Ե. Սերոբյանի կարծիքով՝ զուտ իրավական տեսակետից առաջնայինը կանոնադրության փոփոխությունն է, որից պետք է բխեն կառուցվածքային փոփոխությունները, իրենք ինչ էլ անեն, պետք է սեպտեմբերին սկսեն, քանի որ դասաբաշխումները արդեն արված է, մարդիկ վճարվել են, ճանապարհի կեսից շեղվելու իրավունք չունեն:
Ս. Սարգսյանը նշեց, որ ինքը չի ասում ներդնենք, այլ ստեղծենք նախագիծ:
Փոխգնդապետ Ա. Մկրտչյանը նշեց, որ ինքը կողմ է, որ կանոնադրության վրա աշխատեն, լինի հանձնաժողով, քանի որ Պաշտպանության նախարարությունը ներկայացրել է բազմաթիվ խնդիրներ ռազմական ամբիոնի հետ կապված, ամբիոնը կարող է փաստի առաջ կանգնել, նույնիսկ փակման հարց է առաջ քաշվել, կանոնադրության մեջ ամբիոնի հետ կապված ոչ մի դրույթ չկա և այսօր անհրաժեշտություն է ուղղակի ռազմական ամբիոնի հետ կապված կանոնադրության շտկումները:

Ռ. Մարդոյանի կարծիքով նման հարցերը պետք է լավ քննարկել, հետո գիտխորհուրդ մտցնել:
Ե. Սերոբյանը նշեց, որ այս հարցը մի քանի ամիս է արդեն քննարկվում է, իսկ այստեղ կոլեգիալ որոշում պետք է կայացվի, այնուհետև առաջարկեց ստեղծել յոթ հոգուց կազմված հանձնաժողով, երեքը կանոնադրության փոփոխությունների վրա աշխատեն, երեքը կառուցվածքային փոփոխությունների, նախագահը կլինի համակարգող, հանձնաժողովում կաշխատի բուհի իրավաբանը և ԿԳ նախարարության իրավաբանին խնդրենք աշխատի: Քանի որ երկու հարցն էլ կարևոր է և իրարից են բխում:
Ա. Մկրտչյանի կարծիքով կա կառուցվածք, որին չի համապատասխանում կանոնադրությունը, կառուցվածք ստեղծելու համար պետք է ունենանք ռեկտոր: Այսօր հրատապություն կա միայն կանոնադրություն փոխելու և շտկելու համար:
Ե. Սերոբյանի կարծիքով պարոն Մկրտչյանի ասածից անգործության հոտ է փչում:
Թ. Մելիքյանը նշեց, որ առաջարկները հարկ է դնել քվեարկության, քանի որ նորից երկարացնում ենք, իսկ կառուցվածքային փոփոխությունը հրատապ չէ, այս պահին անհրաժեշտ է կանոնադրության փոփոխություն: Ինքը կարծում է, որ այս հարցի հետ կապված հստակ պետք է հավաքվել արտահերթ գիտխորհրդի նիստի:
Քանի որ գիտական խորհրդր նիստը երկարաձգվեց երեք ու կես ժամ և օրինաչափ դժգոհություն արտահայտվեց գիտխորհրդի անդամների կողմից աշխատանքային օրը ավարտվելու կապակցությամբ, Ե. Սերոբյանը առաջարկեց վերջին հարցի քննարկումը տեղափոխել հաջորդ օրվան 3.11.2018թ.- ժանը 12.00-ն: Գիտական խորհրդի անդամները հավանության արժանացրին առաջարկը և բոլորը համաձայնեցին:
Ա. Հովհաննիսյանը կազմակերպչական հարց առաջ քաշեց,- գիտխորհուրդի նիստերը նշանակել շաբաթվա որոշակի օրերին, նախօրոք պարզելով գիտական խորհրդի անդամների դասացուցակը, որպեսզի ավելորդ ծանրաբեռնվածություն չստեղծվի:

3.11.2018թ.- ժանը 12.00-ին շարունակվեց գիտական խորհրդի նիստը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ՇՊՀ-ի գիտական խորհրդին կից «ՇՊՀ կանոնադրության վերանայման» ժամանակավոր հանձնաժողովը հետևյալ կազմով.

Բագրատ Պողոսյան	ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, բնագիտամաթ. ֆակուլտետի դեկան

Վալերի Խաչատրյան	արհեստակցական միութ. նախագահ
Արմենուհի Սարգսյան	ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, գիտ. քաղ., որակի ապահ. և կառ. կենտրոնի տնօրեն
Օֆելյա Հովհաննիսյան	բան.գիտ. թեկնածու, դոցենտ, սոց. գիտ-ի և իրավունքի ֆակ.-ի դեկան
Ռաֆֆի Քալաջյան	Ֆին. վերլ.ծր. և հաշվ. հաշվառ. բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
Աննա Խաչատրյան	Սոց. գիտ.և իրավունքի ֆակ., «Սոց. աշխ.», 3-րդ կուրսի ուսանողուհի

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

7. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ գիտական տեղեկագրում ներկայացված գիտական հոդվածների տպագրության համար վճարի սահմանման մասին

ՇՊՀ գիտական տեղեկագրի գլխավոր խմբագիր պրոֆեսոր Ս. Սարգսյանի կողմից ներկայացրեց, որ նախատեսում են գիտական հոդվածների տպագրության համար որոշակի վճարի սահմանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Կ. Պետրոսյանի կարծիքով բուհի դասախոսների համար ցանկալի է առանց գումարի լինի:

Պարոն Սերոբյանը նշեց, որ չի կիսում այս կարծիքը, քանի որ գիտական խորհրդում հարց է բարձրացվում վճարի սահմանման մասին և միաժամանակ ասվում, որ բուհի դասախոսական համակազմը չի վճարելու, կարծես իրենք իրենց ժխտում են և ինքը գտնում է, որ կամ բոլորը պետք է վճարեն, կամ բոլորը՝ չվճարեն:

Ս. Սարգսյանի կարծիքով, եթե բուհի դասախոսները իրենց հոդվածների տպագրության համար վճարելու են, ստացվում է, որ մի կողմից վճարելու են, մյուս կողմից իրենք իրենց պարգևավճար են տալու:

Ե. Սերոբյանը նշեց, որ իր կարծիքով գումարը կլինի սիմվոլիկ, ոչ շատ, որը մի փոքր կմեղմի տպագրական ծախսերը:

Ք. Հարությունյանի կարծիքով այս հարցի լրիվ ներկայացման համար ժամանակ է պետք, որպեսզի որոշվի գումարի չափը, հետո միայն քննարկեն:

Պարոն Սերոբյանը հակադարձեց, որ նախ պետք է որոշեն և քվեարկեն, թե վճարովի սկզբունք ներմուծում են, թե ոչ, գիտական հոդվածների տպագրության համար, հետո միայն անդրադառնալ գումարի չափին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ գիտական տեղեկագրում ներկայացված գիտական հոդվածների տպագրության համար սահմանել վճար և դրա հետ կապված ընթացակարգային դրույթները ճշգրտել համալսարանի գիտական տեղեկագրի գլխավոր խմբագիր Ս. Սարգսյանի, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանի հետ և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: